ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

23. հունիսի 2017թ թիվ 111

ՊՌՈՇՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԻ ՇԱՐՔ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով *Հայաստանի Հանրապետության <Աշխատանքային օրենսգրքի > 219-րդ հոդվածի 1- կետի 2-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության* <Տեղական ինքնակառավարման մասին > օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջները

Որոշում եմ

1. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Պռոշյան համայնքի ղեկավար Ա.Մուրադյանին, համայնքի ղեկավարի տեղակալ Ա.Արեյանին, համայնքի ղեկավարի խորհրդականներ Լ.Սահակյանին, Մ.Ազատյանին և համայնապետարանի աշխատակազմի քարտուղար Սնակ Գաբրիելյանին խրախուսել՝ վերջիններիս տրամադրելով միանվագ դրամական պարգևատրում մեկ ամսվա աշխատավարձի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար Ա.Մուրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՈՌՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պոռշյան համայնք
Անդրանիկի փ. 13, էլ հասցե՝ proshyan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունիս 2017 թվականի N 110

ՊՈՌՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի ԹԻՎ 96 ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով, ու հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Մուրադ Հախոյանը հանդիսանում է անհատ ձեռնարկատեր, ով չի դասվում պաշտոնատար անձանց շարքին

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Անհատ ձեռնարկատեր Մուրադ Հախոյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» համայնքի ղեկավարի 2017 թվականի մայիսի 31-ի թիվ 96 որոշումը ճանաչել անվավեր:
2. Որոշման մեկ օրինակը ուղարկել կողմերին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՊՈՌՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պոռշյան համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պոռշյան Անդրանիկի 13

ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2017թ. թիվ 109

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու մասին >> Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29 N 1317-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վարդևան Գևորգյանին տրամադրել բնակելի տան շինարարության թույլտվություն :
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Կ. Ադանյանին վերահսկել շինարարության ընթացքը:
3. Պարտավորեցնել սեփականատիրոջը
   1/ շինարարության աշխատանքները սկսելու համար առնվազն 3 օրվա ընթացքում տեղեկացնել համայնքի ղեկավարին՝ համաձայն N 5 ձևի:
   2/ Մուծելու սահմանված տեղական տուրքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՊՈՌՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պոռշյան համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պոռշյան, Անդրանիկի 13

ՈՐՈՇՈՒՄ

22 հունիս 2017թ. թիվ 108

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> 2006թ-ի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ պարբերության 9, 10 , 11 15 -րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 որոշման պահանջներով ու հաշվի առնելով այն հանգամանքը,որը ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,որ չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում հիմք ընդունելով /Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն/ ԲԲԸ-ն 2017 թվականի հունիսի 6-ի թիվ 119/12 դրական եզրակացությունը և հաշվի առնելով Մարատ Մարտիրոսյանի դիմումը .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Բավարարել Մարատ Մարտիրոսյանի խնդրանքը և նրան պատկանող Պոռշյան համայնքի Գ.Չաուշի փողոց թիվ 7/25 հասցեում կադաստրային ծածկագիր <07-053- 0302-0001 > 0.06 հա հողամասի վրա ինքնակամ կառուցված /արտաքին մակերեսով / 215.67 քմ առնտրի սրահի, ծածկոցի,հարթակի և սանհանգույցի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը :

2.<< Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ պարբերության 18-րդ կետի (բ) ենթակետերի համաձայն հողամասի սեփականատերը համապատասխան բյուջե պետք է մուծի վճարներ յուրաքանչյուր քառ. մետրի համար բազային տուրքի 20-ապատիկի չափով՝215.67քմx20000.0x0.26 = 1121484.0 դրամ :

3. Վեր նշված -/ 1121484.0 դրամ / գումարը պետք է մուծվի որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Պոռշյան համայնքի 900115107063 հաշվեհամարին:

4.Չվճարման դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

5.Կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Կ.Ադամյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՊՈՌՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պոռշյան Անդրանիկի 13
էլ.հասցե՝ proshyan.kotayq@mta.gov.am, Proshyan2413@rambler.ru

ՈՐՈՇՈՒՄ

20 հունվարի 2017թ. թիվ 107

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <Հողային օրենսգրքի > 100-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության <Քաղաքացիական օրենսգրքի > 466-րդ հոդվածով և հիմք ընդունելով հողամասի 2004թ.Դեկտեմբերի 8-իվարձակալության պայմանագրի/սեղ.2625/ 6.1.2 կետի պահանջները ու քաղաքացի Մերուժան Եղիազարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Պոռշյան համայնքի ղեկավարի և քաղաքացի Մերուժան Եղիազարյանի միջև 2004թվականի դեկտեմբերի 8-ին կնքված մրցույթով հողամասի վարձակալության պայմանագիրը /գր.սեղ.2625/ և իրավունքի պետական գրանցում ստացած թիվ 0016809 վկայականը համարել լուծված՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ:
2.Կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Յ. Ռզգոյանի վրա:
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝/ժպ/ ԱՐԱ ԱՐԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՊՈՌՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պոռշյան համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պոռշյան Անդրանիկի 13

ՈՐՈՇՈՒՄ

16 հուլիս 2017թ. թիվ 106

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԿԱՄ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ.-ի նոյեմբերի 30-ի թիվ 1855-ն որոշման 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության << Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> 2006թ-ի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ պարբերության 25 –րդ կետով,հիմք ընդունելով Կիմա Ավետիսյանի /ինքնակամ շինությունը օրինականացնելու մասին/ դիմումը և հաշվի առնելով այն հանգամանքը,որ ինքնակամ շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,չի առաջացնում սերվիտուտ և չի հակասում քաղաքաշինական նորմերին. որոշում եմ

1.Բավարարել Կիմա Ավետիսյանի խնդրանքը և նրա կողմից Բարեկամության փողոց 1-ին շենքի բն. 16 հասցեում գտնվող բնակարանին կից 1986 թ. կառուցված 30.3քմ ինքնակամ շինության նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը:
2.Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ.-ի մայիսի 18-ի N 912 –Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի (ա) ենթակետի համաձայն 30.3քմ x 3000.0 x 0.26 = 23423.4դրամ:Նույն որոշմամբ հաստատված կարգի 25 կետի (բ) ենթակետի համաձայն սույն կետով սահմանված կառույցների զբաղեցրած հողամասերը շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին սեփականության իրավունքով փոխանցվում է անհատույց:
3.Վեր նշված /23423.4 դրամ, / գումարը պետք է մուծվի որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Պոռշյան համայնքի 900115107063 հաշվեհամարին:
4.Չվճարման դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
5.Կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Կ.Ադամյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ /ԺՊ/ ԱՐԱ ԱՐԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՈՍՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պոռշյան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Պոռշյան, (0224) 6-39-39, proshyan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2017 թվականի N 105

ՊՈՍՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Պոռշյան համայնքի ղեկավարի 2017 թվականի ներքոհիշյալ որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին
   1) Պոռշյան համայնքի ղեկավարի <<Պոռշյան համայնքի առավել անապահով ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելու մասին>> 2017 թվականի փետրվարի 2-ի թիվ 11, 2017 թվականի փետրվարի 10-ի թիվ 19, 2017 թվականի փետրվարի 24 թիվ 28, 2017 թվականի մարտի 9-ի թիվ 46, 2017 թվականի մարտի 30-ի թիվ 61, 2017 թվականի ապրիլի 12 թիվ 67, 2017 թվականի ապրիլի 25-ի թիվ 71, 2017 թվականի մայիսի 12-ի թիվ 77, 2017 թվականի հունիսի 6-ի թիվ 104 որոշումների նախաբանում <<43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի>> բառերը փոխարինել <<48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի>> բառերով:
   2) Պոռշյան համայնքի ղեկավարի <<Պոռշյան համայնքի առավել անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձը փոխանցելու մասին >> 2017 թվականի փետրվարի 10-ի թիվ 20, 2017 թվականի փետրվարի 20-ի թիվ 25, 2017 թվականի մարտի 2-ի թիվ 32, 2017 թվականի մարտի 15-ի թիվ 55, 2017 թվականի մարտի 27-ի թիվ 57, 2017 թվականի մարտի 30-ի թիվ 60, 2017 թվականիապրիլի 5-ի թիվ 65, 2017 թվակںնի մայիսի 12-ի թիվ 78, 2017 թվականի մայիսի 22-ի թիվ 87, 2017 թվականի մայիսի 31-ի թիվ 95 որոշումների նախաբանում <<43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի>> բառերը փոխարինել <<48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի>> բառերով:
   3) Պոռշյան համայնքի ղեկավարի 2017 թվականի հունվարի 30-ի <<Պոռշյան համայնքի <<Աստղիկ>> մ/մանկապարտեզի 2017 թվականի սննդամթերքի

ձեռք բերման համար գնումների գործընթացի նախապատրաստման մասին>> թիվ 5 որոշման նախաբանում <<10.02.2011թ.>> բառերը փոխարինել <<2011 թվականի փետրվարի 10-ի>> բառերով:

4) Պոռշյան համայնքի ղեկավարի 2017 թվականի փետրվարի 2-ի <<Պոռշյան համայնքի բնակիչների հուղարկավորության համար նրանց ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելու մասին>> թիվ 12 որոշման նախաբանում <<18.12.2013թ.>> բառերը փոխարինել <<2013 թվականի դեկտեմբերի 18>> բառերով:

5) Պոռշյան համայնքի ղեկավարի 2017 թվականի փետրվարի 7-ի <<Պոռշյան համայնքի 2017 թվականի կենցաղային աղբահանության ծառայությունների գնումների գործընթացի նախապատրաստման մասին>> թիվ 17 որոշման նախաբանում <<10.02.2011թ.>> բառերը փոխարինել <<2011 թվականի փետրվարի 10>> բառերով:

6) Պոռշյան համայնքի ղեկավարի 2017 թվականի փետրվարի 16-ի <<Գյուղատնտեսական ցածրարժեք հողատեսքերը ավելի բարձրարժեք հողատեսքերի փոխադրելու մասին>> թիվ 22 որոշման նախաբանում <<17.09.2009թ.>> բառերը փոխարինել <<2009 թվականի սեպտեմբերի 17>> բառերով:

7) Պոռշյան համայնքի ղեկավարի 2017 թվականի փետրվարի 17-ի <<Պոռշյան համայնքի 2017 թվականի կենցաղային աղբահանության ծառայությունների գնումների գործընթացի նախապատրաստման մասին>> թիվ 23 որոշման նախաբանում <<10.02.2011թ.>> բառերը փոխարինել <<2011 թվականի փետրվարի 10>> բառերով:

8) Պոռշյան համայնքի ղեկավարի 2017 թվականի փետրվարի 24-ի <<Պոռշյան համայնքի համայնքի բնակիչների հուղարկավորության համար նրանց ընտանիքների դրամական օգնություն տրամադրելու մասին>> թիվ 29 որոշման նախաբանում <<18.12.2013թ.>> բառերը փոխարինել <<2013 թվականի դեկտեմբերի 18>> բառերով:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ/ԺՊ/՝ ԱՐԱ ԱՐԵՅԱՆ